

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ն Ա Մ Ա Կ Ի Զ Պ Ա Ր Ա Ց .

Ամենապատիւ Հարք,

- « Սարգիս Վ. Թեոդորեան.
- « Գաբրիել Վ. Այվազովսքի.
- « Ամբրոսիոս Վ. Գալֆայեան.

Ի Փարիզ :

« Գերապատիւ Հարք,

« Նուիրի յՈրդէկէս խոնարն ողջոյն եւ համբոյր սուրբ աշոյն մերոյ :

« Նշոյլ ազգային պայծառութեան ծագեալն ի մենջ որպէս լուսաճաճանց աստղ վասն հայկազեան սեռիս, տարածեալ ամենուրեք շողշողէ : Համբաւ սրբափայլ վաստակոց յոգնակիր ճգանց մերդ Սրբութեան խրախոյս բառնան մեզ յուսալ թէ կրկին վերականգնի կորուսեալն մեր Հայաստան, որ թէ երբեմն պանծայր Միներդատաւ բազմաբարբառ բազաւորան եւ երջանիկ բարգմանչօքն, այնպէս եւ արդ ի մեռն բազմաջան մակացական աշխատութեանց մերոց : Ո՛չ մնային զանխույ ի մերոց լսելեաց անխոնջ աշխատակրուքիւնք մեր, եւ անիրաւ հայածմանց մերոց պատճառք, որ զոգջիք միշտ լեալ եւ այնպիսիք յազգս մեր : Զոր ըստ ամենայնի ի բաց քեալ յանձանց, զԱստուածականն առնելով առաջնորդ, յառաջադիման նկրտեցայք, կառուցանելով զԱրեւելեան բազմայեզու Վարժարանն, որ է պանծալի Արեւն ազգիս, եւ զՄասեաց Աւետարէր Աղանին՝ որ ճիբէնեան իւր առետէ մեզ վասն ապագայ յառաջադիմութեան ազգիս, զարոյ իրազէկ Էդէ ի հակիրճ մատենէն յայտարարութեան անցից Մուրատեան Վարժարանի, եւ ի Պատմութենէ վերադարձի մերոյ ի գիբկ մօրն մերոյ յառաքելական եկեղեցին Հայաստանեայց : Ուստի այժմ հանգստացեալ յազգի ազգի շփոթութեանց՝ որք լինելն եւ լինին վասն ճշմարտութեան ուղղափառութեան մերս-սուրբ եկեղեցւոյ, երախտագետ սրտիս զցայզ եւ զցերեկ ոջ զաղարիմք գիառս վերառաքել ամենակալին Աստուծոյ վասն ճոխապաճոյն սերմանելոյ մեր զճշմարտութիւնն Քրիստոսի, որով եւ առնեք զամենեւեան մարբեալ՝ յարդարեալ եւ յուսաւորեալ յամենայն սահմանադրեալ վարդապետական աւանդութիւնս : Այսորիկ ճշմարտապատում մեր երկք եւ աշխատանք չկարեմ շնդ գրջաւ ածել թէ ճրջափ օգուտս եւ քանի բարիս նատակարարէ վասն Հայ եղբարց մերոց, եւ անբաւական եմ ասել թէ ճրջափ համարձակեցայ ի ծանօթութիւն Գերապատութեանց մերոց բերել. զի դուր

աշխատողոյրդ գիտեք զյարգ եւ զարդիւնս վաստակոց մերոց : Ուրեմն ցնծացեն մանկուքն Հայաստանեայց եւ ժողովեցին շուրջ զճեօք առ ի մարգել յարուեստս ազգի ազգի գիտութեանց՝ ի պետս որք եւ այրի Հայրենեացն իւրեանց, եւ պարտ անձին վարկցեն բազկապէլ ի գլուխ հոգեւոր ազգասիրացոյ, ի մխիբարութիւն սրտի սրտակեզ համազգեացոյ մերոց :

« Ուրախ Էդէց զարդի հանգամանս այտի եւ միշտ լսել. նաեւ յոյս մեծ ունիմ զի օժանդակութիւն շնորհացն Յիսուսի պաշտպանեացէ զգործառնութիւն մեր, եւ նետ զնետէ բուսուսցէ զպտուղս քաղցրահամս ի քիմս համազգեացն մերոց, որք արդարեւ ակնկալեն տարփացեալ սրտիս :

« Պատիւ անձին համարիմ մատչել ի համբոյր Գերապատիւ եւ սրբագործ Աշոյն մերոյ, զյամայր ամս ողջանձնութիւն մեզ հայցելով :

« Մնամ,

« Գերապատիւ Հարք,

« Ազգասիրութեան մերում

« Ամենախոնարն ծառայ

ԵՂԻՍԱԶԱՐ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
ՏԷՐ ԵՂԻՍԱԶԱՐԵԱՆՅ

Նոր Զուգայեցի, ի Զատայ :

« Ի Զարարոյ (ճափարա), յԶ մայիսի 1857 : »

ԳԼՈՐԳ ԱՂԱ ԿԻՄՄԻՇՃԵԱՆ.

Յուլիսի վերջերը յանկարծ Կոստանդնուպօլսէն Հայկազեան ազգային Վարժարանը հասաւ Մեծարգոյ Գեորգ Աղա Կիմիւշճեան, եւ անակնկալ խնդութեամբ հայրասեր որդւոյն եւ մեր սիրտը լեցուց: Շատ անգամ այցելութեան գալով՝ նրբազնին զխոռոչութեամբ ամեն բան քննեց իմացաւ, եւ ըստ իւր բաղձանացը գտնելով — հակառակ ամենեւին լսած անհիմն ու անխիղճ զրպարտութեանց — գովեց մեր ջանքը, քաջալերեց եւ յորդորեց զմեզ օր մեր ազգօգուտ ձեռնարկութեանը մեշ առանց առժամանակեայ հանդիպած դժուարութիւններէն լքանելու արիւրեամբ առաջ երբամբ. « Ազգին սիրովը վառուած ու զօրացած՝ ինչ նկողմ